ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է վերակառուցվել Ս. Էջմիածնի Մայր տաճարը.**

1) V դ. 80-ական թթ.
2) VI դ. 60-ական թթ.
3) V դ. 50-ական թթ.
4) V դ. 60-ական թթ.

2 **Ե՞րբ է տեղի ունեցել Եղվարդի ճակատամարտը.**

1) 1735 թ. հունիսին
2) 1735 թ. հուլիսին
3) 1736 թ. մարտին
4) 1730 թ. հունվարին

3 **Ե՞րբ է Հայաստանը դարձել Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ.**

1) 2015 թ. հունիսին
2) 2015 թ. հունվարին
3) 2014 թ. մայիսին
4) 2014 թ. դեկտեմբերին

4 **Ե՞րբ են Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը կազմել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը.**

1) 1913 թ. սեպտեմբերի 10-ին
2) 1914 թ. հունվարի 26-ին
3) 1912 թ. սեպտեմբերի 10-ին
4) 1913 թ. հոկտեմբերի 10-ին

5 **Ո՞ր թվականին է Արգիշտի I-ը արշավել դեպի Ալիշտու.**

1) Ք. ա. 785 թ.
2) Ք. ա. 781 թ.
3) Ք. ա. 786 թ.
4) Ք. ա. 782 թ.

6 **Մոնղոլները ե՞րբ գրավեցին Հարավային Հայաստանի շրջանները՝ Տարոնը, Վասպուրականը և Աղձնիքը.**

1) 1249 թ.
2) 1236 թ.
3) 1244 թ.
4) 1245 թ.

7 **Ե՞րբ է Տիգրան Մեծը Կորդուքը միացրել Մեծ Հայքին.**

1) Ք. ա. 88 թ.
2) Ք. ա. 94 թ.
3) Ք. ա. 84թ.
4) Ք. ա. 93 թ.

8 **Ե՞րբ են ռուսական զորքերը գրավել Ախալցխայի բերդը.**

1) 1828 թ. հուլիսի 23-ին
2) 1828 թ. օգոստոսի 15-ին
3) 1828 թ. ապրիլի 17-ին
4) 1828 թ. հունիսի 23-ին

9 **Ըստ Մովսես Խորենացու՝ Անի ամրոցի մեհենական արխիվի պատմություններն ի մի են բերել՝**

1) Ամֆիկրատես Աթենացին և Գևորգ Ասորին
2) Մար Աբաս Կատինան և Վրույրը
3) Մեթրոդորոս Սկեփսացին և Բարդածանը
4) Մար Աբաս Կատինան և Օղյումպ քուրմը

10 **Ո՞ր եկեղեցին է Գրիգոր Լուսավորիչը հիմնադրել Աշտիշատում.**

1) Ս. Փրկիչ
2) Ս. Երրորդություն
3) Ս. Ամենափրկիչ
4) Իննակնյան Ս. Կարապետ

11 **Կիլիկյան ո՞ր գահակալն է վերականգնել Կիլիկիայի հայկական պետությունը.**

1) Մլեհը
2) Թորոս I-ը
3) Թորոս II-ը
4) Լևոն I-ը

12 **Պարսից ո՞ր արքայի համաձայնությունն է ստանում Սահակ Պարթևը Համազասպ Մամիկոնյանին սպարապետ նշանակելու հարցում.**

1) Հազկերտ I-ի
2) Հազկերտ II-ի
3) Շապուհ III-ի
4) Վռամ IV-ի

13 **Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության ժամանակ ո՞վ է ղեկավարել հյուսիսային կողմի պաշտպանությունը.**

1) Գևորգ Չավուշը
2) Սեբաստացի Մուրադը
3) Անդրանիկը
4) Հրայրը

14 **Ո՞վ էր Հայաստանի առաջին հանրապետության նորընտիր խորհրդարանի նախագահը.**

1) Սիմոն Վրացյանը
2) Ավետիք Սահակյանը
3) Արամ Մանուկյանը
4) Ավետիս Ահարոնյանը

15 **2003 թ. խորհրդարանական ընտրություններից հետո ո՞ր երեք կուսակցությունները կազմեցին կոալիցիա.**

1) ՀՀԿ, ՀԺԿ, Ժառանգություն
2) ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ
3) ՀՅԴ, ՀՀԿ, ԲՀԿ
4) ՀԿԿ, ՀՅԴ, ՕԵԿ

16 **Ի՞նչ դարակազմիկ փոփոխություն տեղի ունեցավ հայոց պետականության պատմության մեջ Վանի թագավորության ժամանակաշրջանում.**

1) դաշնային կառավարման համակարգից անցում գերկենտրոնացված պետության
2) համադաշնային կառավարման համակարգից անցում ժողովրդավարության
3) դաշնային կառավարման համակարգից անցում կենտրոնացված պետության
4) համադաշնային կառավարման համակարգից անցում կենտրոնացված պետության

17 **Ո՞վ է ստորև բերված վկայության հեղինակը.**

«Հայաստանն… աճել է Արտաշեսի ջանքերով…, և ուստի այստեղ բոլորը միալեզու են»:

1) Ստրաբոնը
2) Խորենացին
3) Պոլիբիոսը
4) Պլուտարքոսը

18 **Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«...գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:

1) Ղազար Փարպեցի
2) Վարդան Արևելցի
3) Կորյուն
4) Մովսես Խորենացի

19 **Ինչպե՞ս էր կոչվում ըստ գերդաստանների հավաքվող հարկը, որը ոչ մահմեդականներից գանձում էին արաբները.**

1) տասանորդ
2) գլխահարկ
3) ծխահարկ
4) աշար

20 **Ո՞ր մարմինն էր Հայ դատի հանձնախումբը.**

1) Հայկական ազգային կոմիտեն
2) Հայկական համաշխարհային կոնգրեսը
3) Համազգային կենտրոնական մարմինը
4) Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը

21 **Ո՞րն էր Բագրատունյաց Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման ջանքերի ձախողման գլխավոր պատճառը.**

1) հայ իշխանների անհնազանդությունը
2) Հայոց եկեղեցու ղեկավարության դիրքորոշումը
3) երկրի՝ տնտեսական առումով հետամնաց լինելը
4) արտաքին գործոնները

22 **Սասանյանները, տիրանալով գահին, թշնամական դիրք բռնեցին հայերի նկատմամբ, որովհետև՝**

1) հայ Արշակունիները սատարում էին Արևելքի քրիստոնեական համայնքներին:
2) Մեծ Հայքի թագավորությունը ցանկանում էր ազատագրվել Սասանյանների գերիշխանությունից:
3) հայ Արշակունիները հավատարիմ էին մնացել իրենց դաշնակից պարթև Արշակունիներին:
4) Մեծ Հայքի թագավորությունը ձգտում էր Սասանյաններից գրավելու Ատրպատականը:

23 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սմբատ Արծրունու օծումը հայոց թագավոր
բ. Աբգար Թոխաթեցու գլխավորած պատվիրակության մեկնումը Վենետիկ
գ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության հրավիրումը Ստեփաննոս Սալմաստեցու կողմից
դ. հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում
ե. Ստեփաննոս Սալմաստեցու գլխավորած պատվիրակության մեկնումը Եվրոպա
զ. Ջհանշահի գահակալման ավարտը

1) դ, ա, գ, զ, բ, ե
2) ա, դ, զ, գ, բ, ե
3) դ, զ, ա, գ, ե, բ
4) դ, ա, զ, գ, ե, բ

24 **XIX դարի ռուս-պարսկական երկրորդ պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թավրիզի գրավումը
բ. Շուշիի պաշարման սկիզբը
գ. Երևանի բերդի գրավումը
դ. Շամքորի ճակատամարտը

1) գ, ա, դ, բ
2) բ, դ, ա, գ
3) դ, գ, ա, բ
4) բ, դ, գ, ա

25 **Արևմտյան Հայաստանում բյուզանդացիների ստեղծած վարչամիավորը համապատասխանեցնել դրանում ընդգրկված Մեծ Հայքի նահանգին.**

1. Այրարատի մեծ մասը	ա. «Մասն Մեծ Հայոց»
2. Տայք	բ. «Մեծ մասն Մեծ Հայոց»
3. Տուրուբերան	գ. «Ներքսագոյն Հայք»
4. Բարձր Հայք	դ. «Խորագոյն Հայք»
	ե. «Մեծ Հայք»

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–ա, 2–դ, 3–բ, 4–գ
3) 1–բ, 2–դ, 3–ե, 4–գ
4) 1–գ, 2–բ, 3–ե, 4–ա

26 **Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1. 1920 թ. նոյեմբերի 22
2. 1920 թ. օգոստոսի 24
3. 1919 թ. մայիսի 28
4. 1920 թ. հոկտեմբերի 28
5. 1920 թ. սեպտեմբերի 1

ա. խորհրդա-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության պայմանագրի նախաստորագրումը
բ. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի բացումը
գ. Հայ-ռուսական «Եզրափակիչ որոշման արձանագրության» նախաստորագրությունը
դ. «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտի» ստորագրումը և հռչակումը
ե. Երևանի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը
զ. ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի իրավարար վճռի հայտնելը հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ

1) 1–գ, 2–զ, 3–ե, 4–բ, 5–ա
2) 1–զ, 2–ա, 3–դ, 4–գ, 5–բ
3) 1–ա, 2–բ, 3–դ, 4–զ, 5–գ
4) 1–զ, 2–ա, 3–գ, 4–ե, 5–բ

27 **Ընտրել երկու ճիշտ պնդումները.**

ա. Ք. ա. IX դ. 80-70-ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող կազմավորումներից նշանավոր էին հարավում Միտաննին, իսկ հյուսիսում՝ Հայասան:
բ. Ք. ա. 859-843 թթ. ասորեստանյան արշավանքներին դիմակայած Արամուն ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող առաջին ուրարտական արքան է:
գ. Արամ Ուրարտացին ոչ միայն ջախջախել է ասորեստանցի նվաճողներին, այլև գրավել Մարաստանն ու Փոքր Ասիայի զգալի մասը և հաղթական արշավանքներով հասել մինչև Պարսից ծոցի և Սև ծովի ափերը:
դ. Հայկական լեռնաշխարհում առաջացած պետական կազմավորումներից Նաիրի թագավորությանը հաջողվել է Ք. ա. 880-ական թվականներից սկսած՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը միավորել իր իշխանության ներքո:
ե. Քանի որ «Ուրարտուն դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ուստի ասորեստանյան աղբյուրները շարունակում են այդ անունով հիշատակել նաև Նաիրի թագավորությունը:

1) դ, ե
2) գ, ե
3) ա, բ
4) բ, ե

28 **Ե՞րբ է Արցախում ստեղծվել ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտեն.**

1) 1991 թ. հուլիսին
2) 1992 թ. հունիսին
3) 1990 թ. օգոստոսին
4) 1991 թ. մայիսին

29 **Ե՞րբ է Դվինի ամիրայությունը միացվել Բագրատունյաց թագավորությանը.**

1) 978 թ.
2) 989 թ.
3) 987 թ.
4) 977 թ.

30 **Ո՞ր մարմինները միջոցներ տրամադրեցին 1920-ական թթ. ներգաղթածների համար նոր ավաններ ու գյուղեր կառուցելու համար.**

1) հայրենակցական կազմակերպությունները
2) Հայ դատի հանձնախմբերը
3) հայ քաղաքական կուսակցությունները
4) Հայոց եկեղեցին

31 **Ո՞ր վանքում են 1862 թ. հուլիսի 29-ի գիշերը Զեյթունի ինքնապաշտպանության ղեկավարները խորհրդակցություն հրավիրել.**

1) Ս. Կարապետ
2) Ս. Գր. Լուսավորիչ
3) Ս. Աստվածածին
4) Ս. Առաքելոց

32 **Որտե՞ղ է ընդունվել հետևյալ որոշումը.**

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

1) Երևանում
2) Մոսկվայում
3) Ալեքսանդրապոլում
4) Բաքվում

33 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«...Եվրոպայում օձ սնուցելով՝ զրկվեցինք Բուլղարիայից. որպեսզի նույնը տեղի չունենա Ասիայում, անհրաժեշտ է բնաջնջել հայությանը»:

1) Աբդուլ Համիդը
2) Զեքի փաշան
3) Քյամիլ փաշան
4) Թալեաթ փաշան

34 **Ինչպե՞ս էր կոչվում Արևելահայոց ազգային համախորհրդակցությունից քիչ անց ձևավորված, օրենսդրական իրավասություն ունեցող մարմինը.**

1) Վարիչների մարմին
2) Հատուկ կոմիտե
3) Հայոց ազգային խորհուրդ
4) Ազգային ժողով

35 **Ինչի՞ շնորհիվ ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող հայկական պաշտպանական ուժերի թիկունքը.**

1) Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերի ոչնչացման և Հորադիզի ազատագրման
2) Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրման
3) Շուշիի ազատագրման
4) Լաչինի ազատագրման

36 **Իրադարձությունների տրված շարքում ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Խոսրով բեկ Սուլթանովի նշանակվելը Ղարաբաղ Զանգեզուրի գեներալ նահանգապետ
բ. Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարի հրավիրումը
գ. անգլիացի գեներալ Դևիի և Դրոյի կողմից Նախիջևանի՝ Հայաստանին պատկանելու մասին հրամանի ստորագրումը
դ. Լևոն Շանթի կողմից ստորագրված պետական լեզվի մասին օրենքի ընդունումը
ե. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրությունները
զ. հայկական համատեղ պահանջների հուշագրի ներկայացումը Փարիզի խորհրդաժողովին

1) բ
2) դ
3) ե
4) գ

37 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Արշամաշատ քաղաքի կառուցումը
բ. Սելևկյան պետության առաջացումը
գ. Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
դ. Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
ե. Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ սելևկյան զորքերի արշավանքը Հայաստանի դեմ
զ. Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը

1) բ, դ, զ, ա, գ, ե
2) դ, բ, զ, ա, ե, գ
3) բ, զ, ա, դ, ե, գ
4) դ, բ, ա, զ, գ, ե

38 **Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները.**

1. Ստեփանոս Շահումյան	ա. «Տիեզերական պատմություն»
2. Ստեփանոս Պալասանյան	բ. «Համառոտ պատմութիւն Աղուանից»
3. Աբրահամ Երևանցի	գ. «Պատմութիւն Դավիթ բեկին»
4. Հովսեփ Գաթըրճյան	դ. «Պատմութիւն Հայոց»
	ե. «Պատմութիւն պատերազմաց»

1) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ե
2) 1–բ, 2–ա, 3–գ, 4–ե
3) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
4) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա

39 **Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ.**

1) 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմված վարչական միավորը կոչվում էր Հայկական մարզ:
2) 1836 թ. մարտի 11-ին հրապարակված եկեղեցական կանոնադրությամբ (պոլոժենիե) սահմանվեցին Հայոց եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու ու կառավարության փոխհարաբերությունները:
3) 1840 թ. վերացվել է Կասպիական մարզը և ստեղծվել երկու վարչամիավոր՝ Վրացա-իմերեթական նահանգ և Հայկական մարզ:
4) 1839 թ. սուլթանական կառավարությունը հրապարակել է թանզիմաթը՝ բարենորոգումների հրովարտակը՝ հռչակելով սահմանադրության ընդունումը և ազգերի իրավահավասարություն:
5) 1844 թ. Կ. Պոլսում ստեղծված մարմինը կոչվում էր Ազգային ժողով, որի անդամների մեծ մասը հայ արհեստավորներն էին:

40 **Որո՞նք էին 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մեծ թվով հայերի մասնակցության պատճառները.**

1) ռուսական բանակի հրամանատարության կազմում զգալի թվով հայ զորավարների առկայությունը
2) Ռուսաստանի կողմից արևմտահայերին տրված լայն արտոնությունները
3) գրավված տարածքներում հայկական ինքնավարություն ստեղծելու Ալեքսանդր II կայսեր խոստումները
4) Արևմտյան Հայաստանի ազատագրման հույսերը
5) թուրքական տիրապետության դեմ հույների ազատագրական պայքարի վերելքը

41 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) 1940-1950-ական թվականներին կառուցվել են պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ, որոնցից են Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը Ապարանում, «Մայր Հայաստան» հուշարձանը Լենինականում (այժմ՝ Գյումրի) և այլն:
2) 1950-1970-ական թթ. հայկական գեղանկարչության ամենաբնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը:
3) 1935 թ. ստեղծվեց Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը, որի մեջ ձուլվեցին գոյություն ունեցող խմբերն ու ընկերությունները:
4) 1967 թ. Հայաստանում գործում էին 112 գիտահետազոտական հիմնարկ՝ 20 հազար գիտաշխատողներով:
5) 1950-ական թվականների կեսերից Հայաստանում մեծ զարգացում են ստացել մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքները, իսկ այդ ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված են ակադեմիկոսներ Արտաշես Շահինյանի, Տիգրան Ջրբաշյանի և Սերգեյ Մերկուրովի անունների հետ:
6) 1950-ական թթ. հայկական արվեստի վերելքը պայմանավորվեց նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով. ասպարեզ մտավ նոր սերունդ, որը ձգտում էր նորովի արտահայտելու հասարակությանը հուզող խնդիրները:

42 **Սյունիքի ազատագրական պայքարի 1720-ական թթ. դեպքերից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) ջևանշիր քոչվոր ցեղերի դեմ տարած հաղթանակը
2) Տաթև գյուղի մերձակա ամրոցի գրավումը
3) Հալիձորի ճակատամարտը
4) Չավնդուրի ճակատամարտը
5) Զևայի և Որոտանի բերդերի ազատագրումը
6) Մեղրիի ազատագրումը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Թիգլաթպալասար III-ի արշավանքը Տուշպա (Վան)
2) Սարգոն II-ի արշավանքը Վանի թագավորության դեմ
3) Սարգոն II-ի կողմից Խալդիի գլխավոր տաճարի թալանումը
4) Ասորեստանի մղած երեսնամյա պայքարի սկիզբն Առաջավոր Ասիայում իր դիրքերը վերականգնելու համար
5) Վանի թագավորության վերածվելը գերտերության

44 **Կատարել համապատասխանեցում.**

ա. 1036
բ. մոտ 55000
գ. 400
դ. 900
ե. ավելի քան 90000

1) հայ նահատակների թիվն Ավարայրի ճակատամարտում
2) նախարարական տների հեծելազորի թիվն ըստ Զորանամակի
3) հայոց զինված ուժերի թիվը Ձիրավի ճակատամարտում
4) հայոց զինված ուժերի թիվն Ակոռիի ճակատամարտում
5) Ավարայրի ճակատամարտում զոհված պարսիկների թիվը
6) հայոց զինված ուժերի թիվն «Արյան լճի» ճակատամարտում

ա	
բ	
գ	
դ	
ե	

45 **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) Մամլուքները և մոնղոլական կարամանների ցեղը 1375 թ. կրկին պաշարեցին մայրաքաղաք Սիսը:
2) Կարա-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սեֆյանները հիմնադրեցին իրենց պետությունը:
3) Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:
4) Վանի թագավորության շրջանից հայտնի մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում, այն բաղկացած էր շուրջ 300 նշաններից:
5) Հռոմեական կայսրությունը Ք. ա. առաջին դարի սկզբներին հզորացել էր և ծրագրել էր գրավել Փոքր Ասիան:
6) Վարազտիրոց Բագրատունին Հերակլ կայսրից ստացել է «պատրիկ-կյուրապաղատի» աստիճան և ճանաչվել հայոց իշխան:

Բ մակարդակ

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ զբաղեցնող հոգևոր-ասպետական կազմակերպություններից մեկը հայտնի էր «Հիվանդախնամների միաբանություն» անունով:
բ. Հայաստանի հարավում՝ Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ-Արմենների աթաբեկություն:
գ. Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զինուժը կոչվում էր աշխարհազոր:
դ. Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր սպասալար:
ե. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյային կոչում էին կանցլեր:
զ. Սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատերերին անվանել են պարոնտեր:
է. Արևմտյան Հայաստանում ստեղծված կիսանկախ իշխանությունները կոչվում էին մելիքություններ:
ը. Քաղաքներում առևտրին, արհեստներին, շուկաներին ու հարկահանությանը հետևող պաշտոնյան կոչվում էր մուհթասիբ:

1) ա, գ, ը
2) բ, զ, է
3) ա, դ, ե
4) բ, դ, է

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Աստվածների գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
բ. Դարեհ III Կոդոմանոսը նախքան պարսկական գահին բարձրանալը եղել է Հայաստանի սատրապ:
գ. Աստղիկը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
դ. Փարպեցին Արտաշես I-ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:
ե. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Անահիտը եղել է նաև ռազմի դիցուհի:
զ. Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ» անուններով գործակալություններ:
է. Դարեհ II-ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:
1) ա, բ, զ
2) ա, դ, է
3) ա, դ, ե
4) բ, գ, զ

48 **Թվարկվածներից որո՞նք են պատմական դեպքերի և իրադարձությունների իրական արդյունքներ.**

ա. Արճեշի ճակատամարտի արդյունքում հայերից զոհվել են չորս իշխաններ և 1500 ռամիկներ:
բ. Մլեհի և Հալեպի ամիրայի դաշինքի արդյունքում վերջնականապես վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը Կիլիկիայում:
գ. Արճեշի ճակատամարտի արդյունքում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և բազում այլ տոհմերից նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ երեք հազար հոգի:
դ. Հայոց հզորագույն ապստամբության (850–855 թթ.) արդյունքում սասանվեց արաբական տիրապետությունը Հայաստանում:
ե. Հայ-վրացական համագործակցության արդյունքում սելջուկներից ազատագրվեցին Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածները:
զ. 1254 թ. հայ–մոնղոլական դաշինքի արդյունքում հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատվեցին հարկերից:
է. Հեթումի և Ալիսի ամուսնության արդյունքում լուծվեց գահակալության խնդիրը, և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:

1) ա, դ, զ
2) բ, գ, ե
3) ա, ե, զ
4) ե, զ, է

49 **Գրել ճիշտ պատասխանները.**

Ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ կայսր Մակրինոսը՝

ա. Տրդատին է վերադարձնում Կապադովկիայի կալվածքները, որոնք ստացել էր դեռևս Խոսրով I-ը:
բ. խոշոր գումար է վճարում Տրդատին, որպեսզի հայոց այրուձին հյուսիսում իրականացնի Կովկասյան լեռնանցքների և հարակից տարածքների պաշտպանությունը:
գ. Տրդատին է վերադարձնում Հայաստանից գերեվարված նրա կնոջը՝ թագուհուն:
դ. Հայաստանից դուրս է բերում հռոմեական լեգեոնները, իսկ նրանց պարտականությունները ստանձնում է հայոց այրուձին:
ե. Տրդատին է վերադարձնում Հայաստանից թալանված ավարը:

1) ա, ե
2) ա, դ
3) ա, բ
4) գ, ե

50 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը
բ. Էնվերի սպանությունը
գ. Քեմալական զորքերի վերջնականապես հեռանալն Ալեքսանդրապոլից
դ. Նազըմի մահապատիժը
ե. ԽՍՀՄ-ի կազմավորումը
զ. ԱԽՍՀԴՄ-իստեղծումը
է. Հայհեղկոմի վերակազմավորվելը ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի
ը. Սայիդ Հալիմի սպանությունը
թ. Սևրի պայմանագրի կնքումը
ժ. հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը

1) զ
2) ա
3) ե
4) բ

51 **Վարդանանց պատերազմի շրջանի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. ապստամբ ուժերի կողմից Արտաշատ, Գառնի, Արտագերս ամրոցների ազատագրումը պարսից կայազորներից
բ. Վարդան Մամիկոնյանի և հոների միջև Սասանյանների դեմ ուղղված դաշինքի կնքումը
գ. Ավարայրի ճակատամարտը
դ. Աղվանքի հազարապետի և եպիսկոպոսների ժամանումը Հայաստան
ե. պարսից զորքի՝ Հայաստանից հանելը Հազկերտի կողմից
զ. ապստամբական կառավարության կազմումը
է. «Հավատո ուխտի» ընդունումը
ը. Աղվանքից Վարդան Մամիկոնյանի շուտափույթ վերադարձը Հայաստան
թ. Հովսեփ Վայոցձորցու և Ղևոնդ Երեցի նահատակությունը
ժ. Խաղխաղի ճակատամարտը

1) է, ա, զ, դ, ժ, բ, ը, գ, ե, թ
2) է, ա, զ, դ, բ, ժ, գ, ը, թ, ե
3) է, ա, դ, զ, բ, ժ, ը, գ, թ, ե
4) ա, է, զ, դ, ե, բ, ը, ժ, գ, թ

52 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.**

ա. ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի անցկացումը
բ. Մ. Գորբաչովի դիմումի հրապարակումը ԽՍՀՄ նախագահի լիազորությունները կամավոր վայր դնելու մասին
գ. ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի սկիզբը
դ. Բելովեժյան հայտարարությունը ԽՍՀՄ-ի վերացման և ԱՊՀ-ի ստեղծման մասին
ե. Լ. Տեր-Պետրոսյանի ընտրվելը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ
զ. ՀԽՍՀ 16 շրջաններում հատուկ դրություն մտցնելը խորհրդային կենտրոնական իշխանությունների կողմից
է. Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում Ազգային խորհրդի ընտրությունը
ը. Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը
թ. Զ. Բալայանի, Վ. Համբարձումյանի, Ս. Սարգսյանի և Ղարաբաղի մի քանի պատգամավորների հացադուլը Մոսկվայում
ժ. Վ. Մանուկյանի նշանակվելը Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ

1) ժ
2) ը
3) թ
4) ե

53 **Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1. 1768 թ.	ա. «Նոր տետրակ»-ի լույսընծայումը Պետերբուրգում
2. 1769 թ.	բ. Հովսեփ Էմինի վերադարձը Հնդկաստան
3. 1770 թ.	գ. Գեորգիևսկի դաշնագրի կնքումը Ռուսաստանի և Վրաստանի միջև
4. 1783 թ.	
5. 1786 թ.	դ. Մովսես Սարաֆյանի՝ Հայաստանի ազատագրության ծրագիրը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացնելը
6. 1790 թ.	
7. 1772 թ.	
	ե. XVIII դարի երկրորդ կեսի ռուս-թուրքական առաջին պատերազմի սկիզբը
	զ. «Նոր տետրակ»-ի լույսընծայումը Մադրասում

1) ա–5, բ–3, գ–4, դ–2, ե–1, զ–7
2) ա–5, բ–3, գ–4, դ–1, ե–2, զ–6
3) ա–7, բ–2, գ–4, դ–5, ե–1, զ–6
4) ա–7, բ–1, գ–2, դ–3, ե–4, զ–6

54 **Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

Շահապիվանի ժողովը՝

ա. խիստ պատիժներ սահմանեց իրենց տերերին դավաճանած, տերերից փախած անհնազանդ ու ըմբոստ ծառաների նկատմամբ
բ. խիստ պատիժներ սահմանեց եկեղեցու կարգերը խախտողների դեմ
գ. դատապարտեց նեստորականների գործողությունները և դավանաբանական նոր գրություն կազմեց
դ. խիստ պատիժներ սահմանեց ընտանիքի կարգերը խախտողների դեմ
ե. կանոնակարգեց և ամրագրեց Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը
զ. վերջնականապես ամրագրեց Հայ առաքելական եկեղեցու ազգային և ծիսակարգային ինքնուրույնությունը
է. խիստ կանոններ սահմանեց եկեղեցական կանոնադրությունն ու պաշտամունքն ավելորդ համարող և տարատեսակ անկարգություններ ու անօրինություններ գործող բորբորիտների դեմ

1) ա, զ, ե
2) ա, բ, զ
3) բ, դ, է
4) դ, զ, է

55 **Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

ա. Ըստ V-VII դարերի «Աշխարհացույցի»՝ Մեծ Հայքը բաժանվել է 15 խոշոր նահանգների, որոնք միասին ունեին 181 գավառ:
բ. Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս-արևմուտքում ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 50000 քառ. կմ տարածք:
գ. Հայերի ծագումնաբանության մասին վրացական ավանդությունը գրի է առնվել IX-XI դարերի վրաց հեղինակների կողմից:
դ. Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արագած լեռը:
ե. Թորգոմա տունը եղել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX-XVIII դարերում:
զ. Եփրատ գետն ունի 500 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից և, միախառնվելով Տիգրիսին, թափվում Պարսից ծոց:
է. Խեթական թագավորի և Հայասայի Խուկանա արքայի միջև կնքվել է բարեկամության և փոխօգնության պայմանագիր:
ը. Խեթական աղբյուրների համաձայն՝ Հայասա թագավորությունն ունեցել է արքունիք, բանակ, արքունի դիվան՝ իր դպիրներով, ինչպես նաև դիցարան:

1) ա, է, ը
2) ա, բ, զ
3) գ, դ, ե
4) ա, բ, է

56 **Ընտրել երեք պատճառ, որոնք նպաստեցին Հուստինիանոս I կայսեր օրոք Արևմտյան Հայաստանում հայ նախարարների իշխանության թուլացմանը.**

ա. հայերի հակաբյուզանդական հաճախակի ելույթները
բ. ժառանգության իրավունքի մասին հատուկ օրենքի ընդունումը
գ. հայ նախարարների միջև փոխադարձ թշնամանքը
դ. իշխանության հանձնումը բյուզանդական զինվորականությանը
ե. նոր վարչական բաժանումները
զ. հաճախ կրկնվող պարսկա-բյուզանդական պատերազմները
է. Հուստինիանոսի կողմից նոր աշխարհագիր անցկացնելը

1) բ, ե, է
2) ա, զ, է
3) բ, դ, ե
4) ա, զ, է

57 **Կատարել համապատասխանեցում.**

Տարեթիվ	**Իրադարձություն**
1. 1888 թ. աշուն	ա. «Դրոշակ» թերթում դաշնակցության հռչակագրի հրապարակումը
2. 1891 թ.	
3. 1890 թ. սեպտեմբեր	բ. Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը
4. 1896 թ.	գ. Դաշնակցության առաջին ծրագրի հրատարակումը
5. 1898 թ.	դ. Վերակազմյալ հնչակյանների հանդես գալը
6. 1887 թ. վերջ	ե. Հնչակյանների՝ Լոնդոնի համագումարի հրավիրումը
	զ. «Խարիսխ» զինագործական արհեստանոցի հիմնադրումը Թավրիզում
	է. «Հնչակ» պաշտոնաթերթի հիմնադրումը

1) 1–է, 2–զ, 3–ե, 4–ա, 5–դ, 6–բ
2) 1–բ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–գ, 6–է
3) 1–բ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–դ, 6–է
4) 1–է, 2–ա, 3–գ, 4–դ, 5–զ, 6–բ

58 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Ռուսական զորքը 1918 թ. փետրվարի 10-ին վերսկսեց պատերազմը Կովկասյան ճակատում:

բ. 1918 թ. մարտին կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի IV հոդվածով և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ Օսմանյան Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:

գ. Անդրկոմիսարիատի 12 կոմիսարներից երեքը հայեր էին՝ Խ. Կարճիկյան, Հ. Օհանջանյան, Գ. Տեր-Ղազարյան:

դ. 1918 թ. մարտի 1-ին ստեղծվել է Առանձին հայկական կորպուսը:

ե. Հայոց ազգային խորհուրդը 1917 թ. դեկտեմբերի վերջերին Թիֆլիսից Երևան է գործուղել Արամ Մանուկյանին՝ օժտելով նրան արտակարգ լիազորություններով:

զ. Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ե. Գեգեչկորու 1917 թ. դեկտեմբերի 7-ի գաղտնի հրամանի համաձայն՝ սկսվել է նվաճված մարզերի հայ բնակչությունից չորս գնդերի կազմավորումը:

է. Հայկական կորպուսի ճակատային և պահեստային զորամասերի կազմավորման գլխավոր վայր դարձավ Երևանի նահանգը:

ը. 1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեի որոշումը Արևմտյան Հայաստանի գրավված տարածքում կառավարման նոր ձև մտցնելու մասին:

1) գ, զ, ը
2) բ, ե, է
3) ա, դ, զ
4) ա, զ, ը

59 **Ստորև բերված փաստարկներից ո՞ր երեքն են ճիշտ.**

ա. Հայրենական պատերազմում առաջին հայ հերոսը Կարապետ Սիմոնյանն էր, որն այդ կոչմանն արժանացավ 1940 թ. հունվարի 15-ին:

բ. 1937 թ. ապրիլին ձերբակալվեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը:

գ. 408-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է Արտաշատում:

դ. Բալթիկայի համար մղվող մարտերից մեկում 1944 թ. զոհվեց ԽՍՀՄ հերոս Նելսոն Ստեփանյանը:

ե. 1945 թ. վերջերին հայրենիքի դավաճանության անհիմն մեղադրանքով ձերբակալվեց ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց):

զ. 1948 թ. սեպտեմբերի 14-ին եղավ ԽՍՀՄ կառավարության որոշումը՝ սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին:

է. 1974 թ. հակախորհրդային գործունեության մեղադրանքով ազատազրկման և աքսորի դատապարտվեցին Ազատ Արշակյանը, Ռազմիկ Զոհրաբյանը, Ռազմիկ Մարկոսյանը, Էդուարդ Կակոսյանը և Գրիգոր Եղյանը:

ը. 1988 թ. դեկտեմբերի 1-ի երեկոյան ընդունվեց «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշումը:

1) բ, զ, է
2) ա, գ, ը
3) դ, ե, է
4) դ, ե, զ

60 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնը կոչվում էր Կովկասի կառավարչապետ:
2) Սասունում սուլթան Համիդ II–ի կազմակերպած հայկական կոտորածներից հետո մեծ տերությունների կազմած բարենորոգումների նախագիծը ստացավ «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը:
3) Կարսի մարզի մեջ մտած գավառները կոչվում էին նաև օկրուգներ:
4) Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը Օսմանյան կայսրության հիմնական օրենքն էր՝ սահմանադրությունը:
5) Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
6) Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ պայքարելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
7) Արևմտահայերի Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվող Ազգային ժողովը հայտնի էր նաև «Երեսփոխանական ժողով» անունով:

61 **Հայաստանի առաջին հանրապետության մշակութային-կրթական գործը զարգացնելու արդյունքում՝**

1) 1919 թ. մայիսին Երևանում բացվեց հայ արվեստագետների ցուցահանդեսը:
2) 1920 թ. սեպտեմբերին կազմակերպվեց պետական թանգարան (ներկայիս Հայաստանի պատմության թանգարանը):
3) Ընդունվեց օրենք պետական հանրային մատենադարան (գրադարան) հիմնելու մասին:
4) Կառավարությունը հսկայական ֆինանսական միջոցներ տրամադրեց մշակութային-կրթական բոլոր հաստատություններին:
5) Հիմնվեցին մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ:
6) Նոր Բայազետում և Դիլիջանում բացվեցին գյուղատնտեսական դպրոցներ, իսկ Ալեքսանդրապոլում՝ տեխնիկական միջնակարգ դպրոց:
7) Ստեղծվեց դպրոցական եռաստիճան համակարգ՝ տարրական, ութամյա և միջնակարգ:

62 **Թվարկվածներից որո՞նք Հայոց մեծ եղեռնի պատճառ չեն.**

1) Անտանտին Անդրկովկասում հավատարիմ դաշնակցից զրկելը
2) հայության ֆինանսական և նյութական ունեցվածքին տիրանալը
3) հայերի հայրենազրկման և ոչնչացման ծրագիրը
4) Միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու ռուսների ծրագիրը
5) Հայկական հարցին մեկընդմիշտ վերջ տալու երիտթուրքերի ձգտումը
6) հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայաստանի միավորման ծրագրի ձախողումը
7) հայ արդյունաբերողների և դրամատերերի մրցակցությունից ազատվելը

63 **Առանձնացնել երեք պայմաններ, որոնք տեղ են գտել 1829 թ. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրում.**

1) Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք:
2) Կարսը, Էրզրումը, Մուշը և Արևմտյան Հայաստանից ռուսների գրաված մյուս տարածքների մեծ մասը վերադարձվում էին Օսմանյան կայսրությանը:
3) Ռուսաստանին էին անցնում Ախալքալաքը և Ախալցխան:
4) Ռուսաստանին էր անցնում նաև Արևմտյան Հայաստանի զգալի մասը՝ Կարսը, Արդահանը, Կաղզվանը և Օլթին:
5) Ռուսաստանը Դանուբյան շրջանում ստանում էր Բեսարաբիան:
6) Ռուսաստանին էին անցնում սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով:
7) Ազատ առևտրի իրավունք էին ստանում երկու կողմերի հպատակները:

64 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) «Հայասեր-ազգասեր» կազմակերպության դատապարտված 40 անդամներից հինգի նկատմամբ մահապատժի վճիռ է կայացվել:
2) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, որոնք փորձել են զենք առաքել «թուրքահայ եղբայրներին»:
3) Բեռլինի վեհաժողովից հետո հայ հասարակական-քաղաքական գործիչներն իրենց հույսը սկսում են կապել Ռուսաստանի ռազմաքաղաքական զորեղ աջակցությամբ ծավալված զինված պայքարի հետ:
4) Զեյթունի 1862 թ. ապստամբությունը խոշոր ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության աննախընթաց բարձրացման վրա:
5) Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից հայտնի է «Հայրենիքի սիրո գրասենյակը»:
6) Գ. Արծրունու ազատագրական խմբակը ստեղծվել է Վանում:
7) «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակների նպատակն է եղել ոչ միայն ազատագրել Արևմտահայաստանը, այլև հասնել ազգի երկու հատվածների միավորմանը:

65 **Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Արտավազդ II-ի և Օրոդես II-ի միջև հայ-պարթևական պայմանագրի կնքումը
2) Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգության բեմադրությունն Արտաշատում Օրոդես II-ի ներկայությամբ
3) Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
4) Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում
5) Խառանի ճակատամարտը
6) թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
7) Արտավազդ II-ի եղերական մահը
8) Արտաշես II-ի դավադիր սպանությունը
9) Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը Հայաստանում
2) «Լոռու չեզոք գոտում» ապստամբության սկիզբը
3) Վրաստանի խորհրդայնացման ավարտը
4) Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը Սիմոն Վրացյանի նախագահությամբ
5) նէպին անցման սկիզբը Հայաստանում
6) Անկարայում ֆրանս-թուրքական զինադադարի ստորագրումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Արամ Մանուկյանի՝ Վանի նահանգապետ նշանակվելը
2) կամավորական ութ ջոկատների վերակազմակերպումը վեց գումարտակների
3) հայ կամավորների մուտքը Վան
4) Նազարեթ Չավուշին խոշտանգելն ու սպանելը
5) կամավորական 2-րդ ջոկատի կողմից Խնուսի գրավումը
6) Օսմանյան կայսրության հատուկ օրենքի ընդունումը՝ կայսրությունից պետության քաղաքացիների ելքն ու մուտքն արգելելու վերաբերյալ

68 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Մոսկվայում հաստատված նորջուղայեցի նշանավոր արվեստագետը
բ. հայկական տպագրության հիմնադիրը
գ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը
դ. Նորավանքի նշանավոր խաչքարագործ վարպետը
ե. Հռոմկլայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը
զ. Սկևռայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը

1) Պողոս
2) Բոգդան Սալթանով
3) Մանուել
4) Մոմիկ
5) Գրիգոր Մլիճեցի
6) Հակոբ Մեղապարտ
7) Թորոս Ռոսլին

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69 **Կատարել համապատասխանեցում.**

ա. շուրջ 180 000
բ. շուրջ 1100
գ. շուրջ 6750
դ. շուրջ 500
ե. շուրջ 40 000
զ. շուրջ 15 000

1) 1932 թ. սկզբին առանց դատաքննության և դատարանի վճիռների գնդակահարվածների թիվը
2) 1930-ական թթ. վերջի դրությամբ կոլտնտեսություններում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների թիվը
3) 1932 թ. առանց դատաքննության և դատարանի վճիռների տարբեր ժամկետներով Հայաստանում ազատազրկման ենթարկված մարդկանց թիվը
4) 1929 թ. դրությամբ հողազուրկ հայ գյուղացիների թիվը
5) 1930-ական թթ. Հայաստանում բռնությունների ենթարկվածների թիվը
6) 1930 թ. ապրիլի դրությամբ որպես կուլակ ունեզրկված տնտեսությունների թիվը
7) 1933 թ. ապրուստի միջոց հայթայթելու նպատակով Սևանա լճի ավազանի շրջանները լքած ընտանիքների թիվը

ա	բ	գ	դ	ե	զ

70 **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) Մեծ հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստան հայրենադարձվել է ավելի շատ մարդ, քան 1921-1936 թթ. և 1950-1982 թթ. ընթացքում միասին վերցրած:
2) Անդրեաս Տեր-Մարուքյանի կերտած՝ Խաչատուր Աբովյանի հուշարձանը նորագույն շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:
3) 1949 թ. դեկտեմբերի 8-ին ՄԱԿ-ը ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան, որի հիմքում ընկած էր լեհական հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինի առաջարկած նախագիծը:
4) Կիլիկիայի հայերի կոտորածների պատասխանատվությունը դնելով Անկարայի Մ. Քեմալի և Կ. Պոլսի երիտթուրքական կառավարության վրա՝ ֆրանսիացիները գործնական որևէ քայլ չարեցին դրանք դադարեցնելու համար:
5) Հնգամյակներով կենտրոնացված պլանավորումը կիրառվել է ԽՍՀՄ գոյության բոլոր տարիներին:
6) Խորհրդային երկրում արդյունաբերացման գործընթացն սկսվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը դեռ չէր հայտարարել նեպից հրաժարվելու մասին: